

Այսպէս գրեթէ եօթը ամսուան պատերազմի միջոց գերմանական բանակին հրամանատարը թշնամեոյն երկու բանակները գերի բերաւ իր հայրենի երկիրը, երրորդ մ'ալ փակեց, առ այժմ պատերազմի գերի Բարիզի մէջ զինաթափ և առանց պաշարոյ պատերազմի, և չորրորդ մ'ալ չէզոք երկիր քաշուելու ստիպեց:

Բայ 'ի այս մեծամեծ յաջողութիւններէն, պաշարող բանակը՝ ամուր և զօրաւոր մայրաքաղաք մը իր երկու միլիոն բնակչովը և գրեթէ կէս միլիոն բանակովը զինաթափութեան ստիպելով, ամեն ժամանակի պատերազմաց ամենէն մեծ գործը վճարեց: Ոչ երբեք այսպիսի քիչ միջոցի մէջ այնչափ և այնպիսի մեծամեծ և յաղթական պատերազմներ մղուած են, ոչ երբեք յաջող կերպով 'ի գլուխ տարուած են այնչափ պաշարումներ, ոչ երբեք առնուած են այնչափ բերդեր և ամուր քաղաքներ, և ոչ երբեք չորս մեծամեծ բանակներ անկարող եղած են պատերազմելու:

Պատերազմի պատմութիւնը եօթը ամսուան կռուով մը՝ նման օրինակներ չընծայեր:

Փ Բ Ե Դ Ե Ր Ի Կ Ո Ս Կ Ա Ր Ո Լ Ո Ս

ԻՔԻՍՆ ԲՐՈՒՍԻՈՑ

Փրեզերիկոս Կարոլոս Գաղղիա արչաւող Գերմանիա բանակին կենդրոնական զօրութեան գլուխն՝ այն անձն է, որ իւր ահաւոր զօրութեամբը օգոստոս ամսոյն 16 ու 18 թուականաց արիւնահեղ պատերազմներովն արգիլեց Մէյ և Շալոն եղող Պագէնի և Մաք-Մաոնի բանակաց իրարու հետ միացումը:

Բրուսիոյ թագաւորին եղբօրը Կարոլոս իշխանին անդրանիկ որդին է Փրեզերիկոս Կարոլոս, որ ծնաւ յամին 1828 մարտի 20: Տղայութենէ սկսեալ ինքը զինքը զինուորական ծառայութեան տուած էր, որ և մեծ յաջողակութիւն

ցուցնելով հեծելազօրուն զօրավար անուանեցաւ: Ինքն եղաւ որ Բրուսիոյ զինուորական զօրութեան մէջ էական փոփոխութիւններ մատուց, և այս փոփոխութեանց կ'ընծայուին մեծաւ մասամբ Բրուսիոյ զինուորութեան այն զարմանալի արագաշարժութիւնը և զործունէութիւնը որ տեսնուեցաւ 'ի Պոհեմիա 1866ի պատերազմով. այնպիսի արագաշարժութիւն և զործունէութիւն մը, որ ոչնչացուց Աւստրիոյ Պէնէտէք զօրավարին մտածութիւնները:

Այն պատերազմին մէջ, Փրեզերիկոս-Կարոլոս Բրուսիոյ առաջին բանակին գլխաւոր զրուած ու Պոհեմիոյ մէջ գործելու սահմանուած էր, ուր մտաւ Սաքսոնիայէն անցնելով: Իւր ռազմագիտական և ճակատայարդար հմտութեամբը յաջողեցաւ իւր բանակը Բրուսիոյ թագաթառանգ իշխանին բանակին հետ միացունել ու Աւստրիացիքը ձգել 'ի Սատովա, ուր խորտակեց զիրենք Սատովայի կամ Բէօնիկրացի համբաւոր պատերազմով:

Չենք խօսիր Տանիմարքայի պատերազմին վրայ, յորում երկու զօրաւոր տէրութիւններ Աւստրիա և Բրուսիա, միացեր էին իրենց ահաւոր ուժովը սակաւաթիւ բայց զիւցազուն ժողովրդեան մը դէմ: Աս պատերազմին մէջ ալ ունեցաւ Փրեզերիկոս Կարոլոս հրամանատարութիւն մը, և թէպէտ յաղթեց, բայց փառքը յաղթելոց և զաւ և ոչ յաղթողաց:

Կ'ըսուի թէ շատ սիրելի է Փրեզերիկոս Կարոլոս բանակին, զինուորաց հանգստութեանը մեծապէս փոյթ տանելուն և ամենուն հետ քաղցրութեամբ վարուելուն համար:

Փրեզերիկոս Կարոլոս միայն զօրական չէ, այլ և ուսեալ մարդ. ունի ոչ միայն փորձառութիւն և արուեստ, այլ և զինուորական զիտութիւն:



ՓԵՆԳԵՐԻԿՈՍ ԿԱՐՈՒՆՈՒ ԻՇԻՁՆ ԲՐՈՒՍԻՆՑ